նում է այն, որ պօլիսօվչիկը կամենում է սալապաններին տանել անտառապետի մօտ. Նրանք հակառակվում են, և ստանում հրացանի գնտակներ։ Դատաստանական քննութիւն է սկսվել։

—

Մեզ հաղորդում են ԴԻԼԻՋԱՆԻՑ, թէ Հաղաջուր կոչված գիւղի մօտ գտնվող Մակարայ վանքի վանահայր Գրիգոր վարդապետը անհետացել է. քանի օրից աւելի կը լինի, որ այլ ևս չէ երևում, վանքի արծաթեղէնները և թանգագին իրեղէնները կողոպտված են։ Ոմանք կարծում են, դրսից եկած աւազակների գործ է, իսկ ոմանք մտածում են, գուցէ հայր սուրբը իր հետ է տարել իրեղէնները։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են. տեղային նոր գաւառապետ իշխ. Նակաշիձէ այցելեց զանազան գիւղեր, և եօթ հոգի նշանաւոր աւազակներից կալանաւորելով, բանտարկեց։ Այժմ փոքր ինչ խաղաղութիւն է տիրում. գողութիւնները, սպանութիւնները առժամանակ դադարած են։

—

«Новое Время» լրագիրը լսել է, որ Ս. Պետերբուրգի կանանց բարձրագոյն կուրսերի մէջ ընդունելութեան ժամանակ վճռված է չը պահանջել մտնող օրիորդներից տնային ուսուցչուհիների վկայագիրներ, կամ իգական գիմնազիայի այնպիսի վկայականներ, որոնք մի տարուց հին չը լինէին։

—

«Новости» լրագիրը հաղորդում է որ օգոստոսի 30-ին սպասվում են բարձր կառավարչական շրջաններում նշանաւոր փոփոխութիւններ, որոնք կը վերաբերվեն արդարադատութեան, զինուորական և պալատի մինիստրութիւններին։ Նոյն լրագիրը լսել է որ տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը վերցվելու է. Ասում են որ Նորին կայսերական Մեծութեան կանցելարիայի երկրորդ բաժինը նոյնպէս վերցվելու է.

—

«Новое Время» լրագիրը լսում է որ կառավարութիւնը, աչքի առաջ առնելով Ռուսաստանի այլ և այլ երկիրների զանազան կլիմայական պայմանները, դիտաւորութիւն ունի սահմանազլուխ երկիրների ուսումնարանական վարչութիւններին թոյլ տալ իրանց հայեցողութեան համեմատ երկարացնել ամառվայ արձակուրդները իրան իշխանութեանը յանձնված դպրոցների մէջ.

—

ԴՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են, թէ պ. պ. Ն. Բաղաթուրով և Հ. Աբիսողոմով նոյն քաղաքում հանգանակութիւն են հաւաքած յօգուտ Վանի սովեալների, և իրանց խոստման հակառակ, տակաւին հաշիւ չը ներկայացրին հասարակութեանը, ոչ էլ որքան հաւաքեցին և ուր ուղարկեցին փողերը։ Խնդրում են, որ յիշեալ պարոնները բաւականութիւն տան նուիրատուների հարցասիրութեանը։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են, թէ պ. Վ. Բարաջանեանցը, «Պսակի» երևելի խմբագիրը, մի օր հասարակաց զբօսարանի այգում, ահագին բազմութիւն իր շուրջը հաւաքած, մեծ ուրախութեամբ պատմում էր նրանց թէ «Մշակ» լրագրի հրատարակութիւնը խափանված է, և բացատրում էր պատճառները։ Հաւատացնում ենք պ. Բարաջանեանցին, որ այդ երեխայական մի ինքնախաբէութիւն է. եթէ աշխարհի բոլոր լրագիրները խափանվելու լինեն, «Պսակը» դարձեալ չի կարդացվի։

—

Մեզ գրում են ՆՈՒԽՈՒՑ. քաղաքի շրջակայ գիւղացիները, ներկայ տարվայ ձմեռը, հացի թանկութեան ժամանակ, իրանց ունեցած ցորենը լաւ գներով վաճառելով, հարստացան։ Այժմ նոյն յուսով, ոչ միայն իրանց հունձքերի բերքը չեն վաճառում, այլ սկսել են մի տեսակ չարչիութիւն անել, արգելել, որ քաղաքը ցորեան տանեն, որովհետև իրանք առնում են և պահում ամբարներում թանգ գնով վաճառելու նպատակով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Голосъ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Դիարբեքիրից «Голосъ» լրագրին գրում են հետևեալը։

Էրզրումի անգլիական հիւպատոս պ. Տրոտտեր հրաւիրվեցաւ այստեղի հիւպատոս պ. Վիլսօնից այցելել Դիարբեքիրը։ Պ. Տրոտտերին հայերը ճանապարհին մեծ ցոյցերով էին հանդիպում։ Նրան ուղեկցում էր ստատիստիկայի և ազգաբնակութեան տրամադրութեան հետ լաւ ծանօթ մի հայ վարդապետ։ Անգլիական հիւպատոսը իր հետ բաւական շատ ոսկիներ էր վերցրել, որոնց հայ ուսումնարանները այցելելու ժամանակ նա բաժանում էր երեխաներին, ասելով. «սովորեցէք, երեխաներ, հաւատացած եղէք, որ Անգլիան ձեզ անպաշտպան չի թողնի։» Սովի ժամանակ, որ դեռ այժմ էլ զգալի է Դիարբեքիրի վիլայեթի մէջ, անգլիացիները բաւական մեծ օգնութիւն էին հասցնում ազգաբնակութեանը, որի հիացումը անգլիացիներով շատ հասկանալի է։

Ուսումնարանները արդէն քիւրդերի մէջ սարերի վրա էլ կան, իսկ քիւրդերը ուրախութեամբ յանձնում են իրանց երեխաներին հայ ուսուցիչներին։ Առհասարակ Դիարբեքիրի վիլայեթին վիճակված է ապագայում բաւական նշանաւոր դեր խաղալ։ Այդ նահանգի մէջ գրեթէ բոլորովին չը կայ թիւրք տարրը. այստեղ ապրում են միայն հայերը և քիւրդերը, որոնք միմեանց հետ կապված են ցեղական բարեկամութեամբ և ընդհանուր աւանդութիւններով։ Հայերը նշանաւոր մեծամասնութիւն են կազմում։ Մի անգլիական միսիօներ հաւատացնում էր ինձ, որ այդ ամբողջ երկիրը հեշտութեամբ կարելի է հանգստացնել, եթէ թիւրք փաշաները փոխարինվեն ընտրված ներկայացուցիչներով, որովհետև փաշաները բարձր կառավարութեան տուած հրամանների համեմատ աշխատում են անդադար անբաւականութիւններ պահպանել զանազան ցեղերի մէջ։

Դիարբեքիրի վիլայեթի մէջ մեծ քանակութեամբ մետաքս է ստացվում, որի արդիւնաբերութիւնը հայուհիների բացառական պարապմունքն է։ Ամենաանաջող և մինչև անգամ անհանգստացնող պայմաններով շրջապատված հայուհիները մեծ ճարպիկութեամբ ինքնուրոյն ձեռքի մեքենաներով գործում են ամեն տեսակ մետաքսէ իրեղէններ ձեռք բերված եւրոպական օրինակների նման։ Նրանք պատրաստում են նոյնպէս հիանալի խալիչաներ, որոնք մինչև անգամ Կ. Պօլսի մէջ չքնղութեան առարկայ են կազմում։

Դիարբեքիրի շրջակաները լիքն են երևելի հին վանքերի աւերակներով, գետնի տակի շինութիւններով և մինչև անգամ տունելներով, որոնք անցկացրած Եփրատ գետի տակ։ Անգլիական գիտնական Տայլօր մի քանի տարի ապրեցաւ այստեղ երկրի պատմական յիշատակարանները ուսումնասիրելու համար։ Լայարտ իր հաստ գրքի մէջ հայկական ճարտարապետութեան մասին յարգանքով է վերաբերվում Հայաստանի հին կուլտուրային, թէպէտ այդ յարգանքը անգլիական նախկին դեսպանին չը խանգարեց վայրենիների և թիւրք փաշաների զոհ անել հին հայերի յիշատակարանները և նրանց սերունդին, որ դեռ կենդանի է իր հայրական կուլտուրայի աւերակների վրա։

Կ. Պօլսի հայոց ազգային ժողովի քսանամեայ տարեդարձը այստեղ առանձին շքեղութեամբ տօնվեցաւ։ Բազմաթիւ ճառեր ասվեցան, որոնց գլխաւոր միտքն այն էր, թէ երկրի ապագան պէտք է ուսումնարաններով և կրթութեամբ ձեռք բերվի, որոնց համար հրաւիրվում էր հասարակական օգնութիւնը և եռանդը։ Հանդիսին ներկայ էին տեղական եպիսկոպոսը, բազմաթիւ կանայք և տեղական ուսումնարանների մէջ ուսումը աւարտած օրիորդներ։ Ես հիացած էի հայ ժողովրդի գեղեցկութեամբ. Լեռնային Հայաստանի ամեն տեղերում կանայք և տղամարդիկ գրեթէ բոլորն էլ շէկ են, դէմքի ամենականոնաւոր գծերով և երկնագոյն կապոյտ աչքերով։ Տղամարդիկը աչքի են ընկնում կանոնաւոր և հսկայական մարմնական կազմվածքով։ Առհասարակ եթէ թիւրքաց արգելման հակառակ այստեղի հայերը զինուորվեն, թիւրքերը և քիւրդերը հեշտութեամբ չեն կարող նրանց հետ գործ ունենալ։ Մինչև անգամ այժմեան պայմանների ժամանակ հայերից շատերը բարեկամանում են քիւրդերի հետ և նրանցից զէնք ստանալով, մասնակցում են նրանց ցեղական կռիւներին։

Օրերումս պ. Վիլսօն կուղևորվի Կ. Պօլիս պ. Գօշենի հրաւէրի համեմատ։ Գնալու ժամանակ նա այցելեց բոլոր հայ ուսումնարանները և խոստացաւ ուսանողներին իր կառավարութենից նրանց համար վերանորոգութիւններ խնդրել։ Երախտապարտութեան միջոցով ժողովուրդի վրա ազդելը և նրա համակրութեան գրաւելը քաղաքականութեան մի նոր ձև է, որ Հայաստանի մէջ մտցրել է գնդապետ Վիլսօն։

ԹԻՖԼԻՍ

—

«Միջազգային ընկերութեան» հեռագիրներից մէկը հաղորդում է հետևեալը։

Պարլամենտի մէջ լորդ Գրենվիլ յայտնեց, որ Բ. Դրան պատասխանը չերնոգորիական հարցի վերաբերութեամբ անբաւականացուցիչ է։ Պետութիւնները Բ. Դրանը տրվելի պատասխանը քննում են, մինչդեռ կարգադրեցին պատերազմական նաւեր ուղարկել Ռագուզա, որպէս զի նրանք Դուլցինիօի մօտ լինեն։ Աւստրիական կառավարութիւնը թոյլ տուեց պետութիւնների նաւերին Ռագուզա մտնել, որովհետև այդ քաղաքը մօտ է այն ափերին, որոնք պէտք է յանձնվեն Չերնոգորիային։ Բրիտանական ծովապետին տրվելի հրամանները պատրաստված են և պետութիւններին հաղորդված։ Բացի այդ հրամաններից դրանց մասին եղած գրագրութիւնն էլ շուտով կը ներկայացնվի պարլամենտին։ Պետութիւնների միաձայն երկրորդ գրութիւնը յունական սահմանների վերաբերութեամբ ընդդէմ է, որ Կ. Պօլսի մէջ նորից բանակցութիւններ սկսվեն սահմանագծի մասին, բայց պատրաստականութիւն է յայտնում քննել Բ. Դրան իւրաքանչիւր առաջարկութիւնը՝ երկիրը թիւրքաց գործերից մաքրելու և նրան Յունաստանին յանձնելու մասին։ Այդ գրութիւնը կը ներկայացնվի պարլամենտին։ Դեսպանները համաձայնեցին միմեանց հետ Հայաստանի մէջ մտցնվելի վերանորոգութիւնների գրութեան վերաբերութեամբ։ Կարծում եմ, որ այդ գրութիւնը անյապաղ կը յանձնվի Բ. Դրանը և այնուհետև կը ներկայացնվի պարլամենտին։ Միջազգային մասնաժողովի աշխատանքները բաւականացուցիչ հետևանքներ ունեցան։ Պետութիւնները միաձայն առաջարկում են Բ. Դրանը այդ օրինագիծը։ Դրա մասին եղած գրագրութիւնը շուտով կը ներկայացնվի պարլամենտին։

ԷԼԶԱՍ-ԼՕՏԱՐԻՆԳԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալը։ Ֆրանսիայի և Գերմանիայի փոխադարձ յարաբերութիւնները վերջին ժամանակներում նորից իրանց վրա ուշադրութիւն դարձրին։ Այդ յարաբերութիւնների ապագայ լուծման հարցը ամբողջապէս կենտրոնացած է Էլզաս-Լօտարինգիայի վրա։ Կարելի է ասել, որ այդ նահանգները միակ սերմ են այն խուլ պատերազմի, որ ժամանակով արիւնահեղ կռուի առիթ կարող է դառնալ։

Գերմանացիների յաղթութիւններից վիրաւորված ֆրանսիացիների ինքնասիրութիւնը կարող է բաւականութիւն ստանալ քաղաքայնութեան աջողութեամբ և պատմութիւնը լաւ հասկանալով, որից երևում է, թէ պատերազմական բաղդը փոփոխապէս մի ազգութենից միւսին էր անցնում և շատ շատ չէր վարձատրում արժանաւորներին։ Բայց ուժով խլված նահանգների վերադարձնելու անհրաժեշտութիւնը, ամենից շատ «իր որդիների վրէժն առնելու» ազգային պարտաւորութիւնը Ֆրանսիայի մէջ նշանաւոր հիմունք կը լինի պատերազմի, մինչև անգամ ամենախաղաղասէր մարդկերանց համար։

Բայց գլխաւորը Էլզաս-Լօտարինգիայի ազգաբնակութեան տրամադրութիւնն է. արդեօք նա ո՞րքան հակված է դէպի Ֆրանսիա, կամ Գերմանիա։ Ֆրանսիայի ամենաաջող պատերազմը անկարող կը լինի խլել այդ նահանգները Գերմանիայից, եթէ նրանք այս վերջինի հետ ներքին կապ կունենան և այդպիսի պատերազմ չի էլ սկսվի փաստի ակներևութեան պատճառով։ Ընդհակառակը առանց պատերազմի էլ նրանք կը հեռանան Գերմանիայից, եթէ անկարելի կը լինի այդ նահանգների մէջ վերածնեցնել գերմանական ոգին, քանի որ Էլզաս-Լօտարինգիայի ազգաբնակութիւնը երկու դարերի ընթացքում մոռացել է իր գերմանական ծագումը։

Այդ էր պատճառը, որ երբ Ֆրանսիայի և Գերմանիայի փոխադարձ յարաբերութիւնները ուշադրութիւն դարձրին իրանց վրա, եւրոպական մամուլը շատ դատողութիւններ տուեց Էլզաս-Լօտարինգիայի մասին։ Աւելի շատ խօսվեցաւ այդ նահանգների վարչութիւնների առանձնական փոփոխութիւնների, նոյնպէս և նահանգների կազմակերպութեան մասին, որոնք կենտրոնական վարչութենից մեծ ազատութիւն ստացան։

Թէպէտ Էլզաս-Լօտարինգիայի ազգային տրամադրութիւնը և նրա համակրութիւնը դէպի Ֆրանսիա կամ Գերմանիա չափազանց հետաքրքիր է իմանալ, բայց այդ գործի համար ճշմարիտ նիւթեր չը կան։ Տեղական հեռագրողների հաղորդած բոլոր տեղեկութիւնները նկարված են միակողմանի, ֆրանսիական կամ գերմանական գոյնով. եթէ տեղեկութիւնները մինչև անգամ բարեխղճաբար էլ են հաղորդած, այնուամենայնիւ նրանք ֆրանսիական կամ գերմանական գաղափարների նպաստող փաստերի հաւաքածու են։ Բացի այս գերմանական իշխանութեան եռանդոտ ճնշման տակ ժողովրդական համակրութիւնը անկարող է յայտնվել, եթէ մինչև անգամ կարծիքների և խօսքի ազատութիւն էլ լինի։

Այս հանգամանքները 'ի նկատի ունենալով, պէտք է բաւականանալ Էլզաս-Լօտարինգիայի զարգացած հասարակութեան մտաւոր շարժման ցոյցերով։ Այդ ցոյցերից կարելի է իմանալ, որ յիշեալ հասարակութիւնը, բացի անհատներից, չէ հակվում այս, կամ այն կողմը։ Մինչև այժմ յիշեալ նահանգները անբաւական են, որ պատկանում են Գերմանիային այն պատճառով, որ Ֆրանսիան աւելի հարուստ է և որ գերմանական պետական, մանաւանդ զինուորական հարկերի ծանրութիւնը հետզհետէ զգալի է դառնում։ Բայց այս անբաւականութիւնը անկարող է ապստամբութիւն ծագեցնել։

Գերմանականութիւնը և գերմանական վարչութիւնները այդ նահանգների մէջ մինչև այժմ անաջող հետևանքներ են ունեցել։ Գերմանական կառավարութիւնը, իբրև փորձ, նորերումս դարձեալ փոխեց իր վարչական ձևերը Էլզաս-Լօտարինգիայի վերաբերութեամբ։ Գերմանիային աջողվեց միայն ուժեղացնել տեղական աւտօնօմիստների կուսակցութիւնը, որ հեռու մնալով ամեն տեսակ քաղաքական հայեացքներից, ձգտում է, որքան կարելի է տեղական վարչական մեծ անկախութիւն ստանալ։ Ֆրանսիացիների համար այս անախորժ կուսակցութեան զարգացումը իրանք էլ չեն մերժում։ Այնուամենայնիւ դժուար է պնդել, որ աւտօնօմիստները Ֆրանսիային չեն համակրում։

Այս հանգամանքները ի նկատի ունենալով դժուար է հասկանալ ժողովուրդի ներքին տրամադրութիւնը։ Անկարելի է նախատեսել պատմական հանգամանքների կազմակերպվելը. բայց հաւանական է, որ Էլզաս-Լօտարինգիայի վրա ամենամեծ ազդեցութիւն կունենայ գերմանական պետական ներքին կեանքի ընթացքը։ Այդ ընթացքը վերջին ժամանակներում Գերմանիայի մէջ չափազանց խառն է, իսկ Ֆրանսիայի մէջ չափազանց որոշ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 26 օգոստոսի։ Այսօր փակվեցան պարլամենտի նիստերը։ Գահական ճառի մէջ յիշված է եւրոպական համաձայնութիւնը արևելեան խնդրի վերաբերութեամբ և յոյս է յայտնված, որ գեներալ Ռօբերտսի յաղթութիւնը արագ և պատուաւոր վերջ կը տայ Աֆգանիստանի պատերազմին։ Պարլամենտի նիստերը փակված կը լինեն մինչև Նոյեմբերի 24։

ՏՕՄՍԿ, 26 օգոստոսի։ Այսօր մաղթանքից յետոյ Սիբիրի համալսարանի գլխաւոր շինութեան հանդիսաւոր հիմնադրութիւնը կատարվեցաւ։ Սիբիրից պատգամաւորներ եկան և բազմաթիւ հեռագիրներ ստացվեցան։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ